

# Շահագործման ձեռնարկ

Advantage® 2.1 Actuator



**ITT**







# Բովանդակություն

<b>1 Ներածություն և Անվտանգություն</b> .....	<b>2</b>
1.1 Անվտանգության ծանուցման մակարդակներ .....	2
1.2 Օգտագործողի առողջության և անվտանգության ցուցումներ.....	2
<b>2 Ապրանքի նկարագրություն</b> .....	<b>5</b>
2.1 Շարժաբերի նույնականացում.....	5
2.2 Փակոցի նկարագրություն .....	6
2.3 Փականի դիաֆրագմայի նույնականացում .....	6
<b>3 Տեխսպասարկում</b> .....	<b>8</b>
3.1 Նախագուշական ցուցումներ.....	8
3.2 Ստուգում .....	8
3.3 Փակոցի ամրակումների ձգում .....	8
3.3.1 Ամրակցիչի պտտող մոմենտի տվյալների աղյուսակ փականի իրանից մինչև շարժաբեր մեխանիզմների համար.....	9
3.4 Փականի կազմատում .....	9
3.5 Փականի դիաֆրագմայի փոխարինում.....	10
3.6 Վերհանման (փական) սահմանափակիչի կարգավորում .....	11
3.7 Ճնշակի, խողովակի մանեյի և կիպարար օղակի փոփոխում .....	11
3.8 Օ-աձև օղակների փոխարինում .....	12
3.9 Պահանջներ քսայուղման համար.....	13
3.10 Խափանման ժամանակ բացվող շարժաբերի դիաֆրագմայի և զսպանակի փոխարինում .....	13
3.11 Խափանման ժամանակ փակվող շարժաբերի դիաֆրագմայի և զսպանակի փոխարինում .....	14
3.12 Հետադարձ աշխատող շարժաբերի դիաֆրագմայի փոխարինում.....	15
3.13 Ձգեք շարժաբերի կափարիչը կափարիչի ամրակումներին:.....	16
3.13.1 Շարժաբերի կափարիչից կափարիչին ամրակումների պտտող մոմենտի աղյուսակ .....	16
<b>4 Մասերի ցանկ և լայնակի հատումների գծագրեր</b> .....	<b>17</b>
4.1 Advantage 2.1 շարժաբերի մասեր.....	17
<b>5 Certifications</b> .....	<b>18</b>
5.1 Համապատասխանության հայտարարագիր.....	18
5.2 Միավորման հայտարարագիր .....	20

# 1 Ներածություն և Անվտանգություն

## 1.1 Անվտանգության ծանուցման մակարդակներ

### Սահմանումներ

Անվտանգության ծանուցման մակարդակ	Ցուցում
 <b>ՎՏԱՆԳԱՎՈՐ Է.</b>	Վտանգավոր իրավիճակ, որը չկանխելու դեպքում՝ կհանգեցնի մահվան կամ լուրջ մարմնական վնասվածքի
 <b>ԶԳՈՒՇԱՑՈՒՄ.</b>	Վտանգավոր իրավիճակ, որը չկանխելու դեպքում՝ կարող է հանգեցնել մահվան կամ լուրջ մարմնական վնասվածքի
 <b>ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.</b>	Վտանգավոր իրավիճակ, որը չկանխելու դեպքում՝ կարող է պատճառել թեթևից միջին աստիճանի մարմնական վնասվածք
 <b>ԷԼԵԿՏՐԱԳՆԱՐՄԱՆ ՎՏԱՆԳ.</b>	Էլեկտրահարման վտանգի հավանականություն, եթե անվտանգության ցուցումները և հրահանգները պատշաճ կերպով պահպանված չեն
<b>ԾԱՆՈՒԹՈՒՄ.</b>	<ul style="list-style-type: none"> <li>Վտանգավոր իրավիճակ, որը չկանխելու դեպքում՝ կարող է առաջացնել անցանկալի հետևանք կամ վիճակ</li> <li>Վիճակ, որը կապված չէ մարմնական վնասվածքի հետ</li> </ul>

## 1.2 Օգտագործողի առողջության և անվտանգության ցուցումներ

### Ընդհանուր նախազգուշական ցուցումներ

Այս ապրանքը նախագծվել և արտադրվել է լավագույն նյութերի օգտագործմամբ և բարձր վարպետությամբ և համապատասխանում է ոլորտում գործող բոլոր չափանիշներին: Այս ապրանքը պետք է օգտագործել միայն ITT ընկերության ցուցումների համաձայն:



### ԶԳՈՒՇԱՑՈՒՄ.

- Փականի սխալ շահագործումը կարող է պատճառել մարմնական վնասվածք կամ վնաս հասցնել գույքին: Ընտրեք ճիշտ նյութերից պատրաստված փականներ և բաղադրիչների և համոզվեք, որ դրանք համապատասխանում են Ձեր աշխատանքային պահանջներին: Այս ապրանքի ոչ ճիշտ կիրառում է հանդիսանում հետևյալը՝ առանց սահմանափակման.
  - Ճնշման կամ ջերմաստիճանի ցուցանիշների գերազանցում
  - Ապրանքի տեխսպասարկման իրականացում առանց համապատասխան պահանջները բավարարելու
  - Ապրանքի օգտագործում այնպիսի նյութերի համար, որոնք անհամատեղելի են նրա կառուցվածքի նյութերի հետ

### Որակավորումներ և փորձարկում

Փականի հավաքման, շահագործման, ստուգման և տեխսպասարկման համար պատասխանատու անձնակազմը պետք է ունենա համապատասխան որակավորում: Շահագործող ընկերությունը պետք է կատարի հետևյալ առաջադրանքները:

- Սահմանել այս սարքավորման հետ աշխատող անձնակազմի բոլոր անդամների պատասխանատվություններն ու կարողությունները:
- Իրականացնել իրահանգավորում և ուսուցում:
- Ապահովել, որ անձնակազմի բոլոր անդամները լիարժեքորեն հասկանան շահագործման ցուցումների բովանդակությունը:

Հրահանգավորում և ուսուցում կարող են իրականացնել ինչպես ITT ընկերությունը, այնպես էլ՝ փականը վաճառող ընկերությունը:



### **ԶԳՈՒՇԱՑՈՒՄ.**

Կալիֆորնիայի օրենք 65 Զաղցկեղ <http://www.P65Warnings.ca.gov>: Ապրանքը պլաստիկը պարունակում է ապակե բրդե մանրաթելեր, որոնք ըստ Կալիֆորնիայի Նահանգի կարող են առաջացնել քաղցկեղ: Ձեռք տալուց հետո լվացեք ձեռքերը:

### **Սույն կանոնները չպահպանելու հետ կապված վտանգներ**

Անվտանգության բոլոր Նախազգուշական ցուցումները չպահպանելու դեպքում կարող է պատահել հետևյալը.

- Մահ կամ լուրջ վնասվածք էլեկտրական, մեխանիկական և քիմիական ազդեցության հետևանքով
- Վնաս շրջակա միջավայրին վնասակար նյութերի արտահոսքի հետևանքով
- Ապրանքի վնասում
- Գույքի վնասում
- Չրկում վնասների դիմաց բոլոր տեսակի բողոքներ ներկայացնելու իրավունքից

### **Շահագործման անվտանգության Նախազգուշական ցուցումներ**

Այս ապրանքը շահագործելիս՝ պետք է ի սկստի ունենալ անվտանգության հետևյալ ցուցումները.

- Մի՛ հեռացրեք շարժական մասերի կոնտակտային պաշտպանիչ միջադիրը, երբ ապրանքը շահագործման մեջ է: Երբեք մի՛ շահագործեք ապրանքը, եթե կոնտակտային միջադիրը տեղադրված չէ:
- Ապրանքից այլ իրեր մի՛ կախեք: Բոլոր տեսակի հարակից պարագաները պետք է ամուր կամ հիմնական ամրակցված լինեն:
- Մի՛ օգտագործեք ապրանքը որպես աստիճան կամ ձեռքի բռնակ:
- Մի՛ ներկեք այս ապրանքի հետ կապված նույնականացման պիտակը, Նախազգուշական նշանները, ցուցումները կամ այլ նշանները:

### **Տեխսպասարկման անվտանգության Նախազգուշական ցուցումներ**

Այս ապրանքի տեխսպասարկումն իրականացնելիս՝ պետք է ի սկստի ունենալ անվտանգության հետևյալ ցուցումները.

- Դուք պետք է ապրանքը մաքրեք աղտոտումներից, եթե այն ենթարկվի վնասակար, օրինակ քիմիական քայքայիչ նյութերի ազդեցությանը:

### **Զթույլատրված մասերի օգտագործում**

Ապրանքի վերակազմավորումը կամ ձևափոխումը թույլատրվում է միայն ITT ընկերության հետ խորհրդակցելուց հետո: ITT ընկերության կողմից թույլատրված գործարանային պահեստամասերը և հարակից մասերը ապահովում են անվտանգություն: ITT ընկերության ոչ գործարանային մասերի օգտագործումը կարող է ազատել արտադրողին հետևանքների պատասխանատվությունից: ITT ընկերության մասերը չպետք է օգտագործել ITT ընկերության կողմից չառաքված մասերի հետ, քանի որ նմանատիպ ոչ ճիշտ օգտագործումը կարող է ազատել արտադրողին հետևանքների պատասխանատվությունից:

### **Շահագործում անթույլատրելի եղանակով**

Այս ապրանքի աշխատանքային հուսալիությունը երաշխավորվում է միայն այն դեպքում, եթե այն օգտագործվում է ըստ նշանակության: Նույնականացման պիտակի վրա և տվյալների մասնագրում

Նշված աշխատանքային սահմանափակումները չի կարելի գերազանցել ոչ մի հանգամանքում: Եթե նույնականացման պիտակը բացակայում է կամ մաշվել է, կապվեք ITT ընկերություններին՝ հատուկ ցուցումներ ստանալու համար:

# 2 Ապրանքի նկարագրություն

## 2.1 Շարժաբերի նույնականացում

### Կառուցվածքի նկարագիր

Շարժաբերը զսպանով կամ հետադարձ շարժմամբ աշխատող պնևմատիկ շարժաբեր է:


Որպեսզի որոշեք, թե Ձեր ունեցած շարժաբերը որ տեսակից է՝ Advantage շարժաբեր, թե Advantage actuator 2.1, տեղադրեք իլային ճնշակի միակցիչը և որոշեք, թե արդյոք դուք ունեք հպակային միակցում, թե մոդուլար ճնշակ:



**Նկար 1:** Հպակային միակցում Advantage շարժաբերի համար



**Նկար 2:** Ճնշակ Advantage 2.0 շարժաբերի համար



**Նկար 3:** Կիպարար օղակով մոդուլար ճնշակ Advantage 2.1 շարժաբերի համար

### Մոդելի համար

Շարժաբերի մոդելի համարը նշված է հետևյալի վրա: ITT նույնականացման պիտակ: Մոդելի համարը կազմված է չորս թվից, որը շարժաբերի համար նշանակում է հետևյալը.

#### Աղյուսակ 1: Շարժաբեր

Ծածկագիր	Նկարագրություն
B	Advantage 2.1 շարժաբեր

#### Աղյուսակ 2: Աշխատանքային ռեժիմ

Ծածկագիր	Նկարագրություն
1	Խափանման ժամանակ բացվող (զսպանը բացվում է, օդանցքը փակվում է) (ուղղակի աշխատող)
2	Խափանման ժամանակ փակվող (զսպանը փակվում է, օդանցքը բացվում է) (հետադարձ աշխատող)
3	Կրկնակի գործողությամբ (օդանցքը բացվում է, օդանցքը փակվում է)

#### Աղյուսակ 3: Շարժաբերի սերիաներ

Ծածկագիր*1	Շարժաբերի սերիաներ*2
03, 04	3
05, 06	5
08, 09	8
16, 17	16


\*1 Խափանման ժամանակ փակվող շարժաբերների համար ծածկագրերը ներկայացնում են հատուկ զսպանային համակցումներ:

\*2 Սերիաների համարները հավասար են ԵՊ հիմնադրամայի աշխատանքային միջակայքին:

**Աղյուսակ 4: Օրինակներ**

Մոդելի համար	Նկարագրություն
B308	Advantage 2.1 շարժաբեր, կրկնակի գործողությամբ, սերիա 8
B216	Advantage 2.1 շարժաբեր, խափանման ժամանակ փակվող, սերիա 16, գապանային կոմպլեկտով

**Նույնականացման պիտակ**



Շարք	Նկարագրություն
1	Փականի սերիական համար
2	Փականի չափս և մոդելի համար
3	Փականի դիաֆրագմայի տեսակ
4	Շարժաբերի առավելագույն թույլատրելի ճնշում

**2.2 Փակոցի նկարագրություն**

**Ոչ հերմետիկ փակոց**

Ոչ հերմետիկ փակոցն ունի դրենաժային անցք, որը ցույց է տալիս դիաֆրագմայի խափանումը՝ թույլ տալով փակոցում կուտակված հեղուկի հեռացումը անցքի միջով:

**2.3 Փականի դիաֆրագմայի նույնականացում**

**Դիաֆրագմայի պիտակի ծածկագիր**

Դիաֆրագմայի համար օգտագործված բոլոր նյութերին և դրանց ֆիզիկական հատկություններին կարելի է ծանոթանալ ըստ խմբաբանակի՝ դիաֆրագմայի պիտակին մամլված մշտական ծածկագրի միջոցով: Մամլվածքի ամսաթիվը, դիաֆրագմայի կարգը և չափսը թույլ են տալիս հետևել խմբաբանակի համար գործարանային գրանցված տվյալներին:



1. Ամսաթվի ծածկագիր
2. Մատակարարի ծածկագիր

**Նկար 4: Դիաֆրագմայի առաջամաս ճկուն պոլիմերից**





1. Փականի չափս
2. Դիաֆրագմայի կարգ

**Նկար 5: Դիաֆրագմայի հետևամաս ճկուն պոլիմերից**



1. Նյութի ծածկագիր
2. Ամսաթվի ծածկագիր

**Նկար 6: Դիաֆրագմա պոլիտետրաֆլյորէթիլէնից**

# 3 Տեխնապատարկում

## 3.1 Նախագուշական ցուցումներ



### ԶԳՈՒՇԱՑՈՒՄ.

- Բոլոր գործողությունները պետք է իրականացվեն փորձառու անձնակազմի կողմից:
- Եթե աշխատանքային հեղուկը վտանգավոր է ջերմային տեսանկյունից (տաք է կամ սառը) կամ քայքայիչ է, ձեռնարկեք լրացուցիչ պաշտպանիչ միջոցառումներ: Գործածեք անվտանգության համապատասխան միջոցներ և եղեք պատրաստ աշխատանքային նյութի արտահոսքը կառավարելու համար:
- Մշտապես կրեք պաշտպանիչ հագուստ և միջոցներ աչքերը, երեսը, ձեռքերը, մաշկը և թոքերը համակարգի հեղուկից պաշտպանելու համար:
- Մի կազմատեք շարժաբերը տեղամասային պայմաններում: Շարժաբերը պարունակում է ձգված գսպաններ, որոնք կարող են վնասվածք պատճառել: Ապրանքը նախատեսված է ամբողջովին թափոնելու համար:



### ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

- Անշատեք էլեկտրական, պնևմատիկ և հիդրավլիկ հոսանքները նախքան շարժաբերի կամ ավտոմատ աշխատող բաղադրիչների տեխնապատարկումը:

## 3.2 Ստուգում

Ստուգման հատված	Ինչ ստուգել	Գործողություն խնդիր հայտնաբերելու դեպքում
Փականի արտաքին մասեր	Գերմաշվածություն կամ կոռոզիա	<ul style="list-style-type: none"> <li>• Փոխարինեք վնասված մասերը</li> <li>• Դիմեք ITT ընկերությանը փոխարինող մասեր ձեռք բերելու կամ հատուկ ցուցումներ ստանալու համար</li> </ul>
Առանց հերմետիկի փակոց	Ջեղուկի արտահոսք խցափակիչից	Փականի դիաֆրագմայի փոխարինում
Շարժաբերի փակոցի դրեմաժային անցք և օդուղիներ	Օդի ճնշում	Դիմեք ITT ընկերությանը՝ հատուկ ցուցումներ ստանալու համար
Փականի իրանից մինչև շարժաբեր տեղադրված մեխանիզմներ	Սռնակի լուծվելը, ավելորդ աղմուկ կամ քսայուղի չորացում	Դիմեք ITT ընկերությանը՝ հատուկ ցուցումներ ստանալու համար
Դիաֆրագմա և փականի իրան	Արտահոսք դիաֆրագմայի և փականի իրանի միջև	Փակոցի ամրակումների ձգում

Հավելյալ տեղեկությունների համար տես:

- [3.5 Փականի դիաֆրագմայի փոխարինում on page 10](#)
- [3.3 Փակոցի ամրակումների ձգում on page 8](#)

## 3.3 Փակոցի ամրակումների ձգում



### ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Մի ձգեք ամրակիչներն այն ժամանակ, երբ համակարգը գտնվում է ճնշման կամ բարձր ջերմաստիճանների տակ (38°C-ից | 100°F-ից բարձր):

1. Հանեք համակարգի ճնշումը:

2. Օգտագործեք կարգավորվող օդի ճնշում, որպեսզի դիրքավորեք դիաֆրագման այնպես, որ փականը թեթև բաց լինի:  
Հնարավոր է անհրաժեշտ լինի օգտագործել օդի ճնշում՝ փականը գործի դնելու համար:
3. Ձգեք փակոցի ամրակումները խաչաձև ուղղություններով:  
Մանրամասն տեղեկատվության համար տես [3.3.1 Ամրակցիչի պտտող մոմենտի տվյալների աղյուսակ փականի իրանից մինչև շարժաբեր մեխանիզմների համար on page 9](#):
4. Կատարեք բազմաթիվ խաչաձև անցումներ, մինչև ստանաք պտտող մոմենտի վերջնական աղյուսակային արժեքը: Կատարեք լրացուցիչ խաչաձև անցումներ՝ օգտագործելով աղյուսակի վերջնական արժեքները, որպեսզի հավասար ձգեք յուրաքանչյուր ամրակումը նշված պտտող մոմենտի արժեքի 5%-ի սահմաններում:
5. Կրկին ձգեք փակոցի ամրակումներն այնպես, ինչպես նշված է վերևում, հաշվի առնելով միջավայրային պայմանները, երբ համակարգը կատարել է շրջանառության մեկ ցիկլ աշխատանքային ճնշումը և ջերմաստիճանը ձեռք բերելուց հետո:
6. Հետևեք, որ փականը արտահոսք չունենա:

Եթե արտահոսքը ...	ապա ...
իրանի/փակոցի կցաշուրթի հերմետիկ հատվածում է,	հանեք համակարգի ճնշումը և կրկին ձգեք փակոցի ամրակումները, ինչպես նշված է վերևում:
շարունակվում է,	հանեք համակարգի ճնշումը և կրկին ձգեք փակոցի ամրակումները, ինչպես նշված է վերևում: (առավելագույնը 3-րդ կրկնակի պտտումն է)
շարունակվում է,	Փոխեք փականի դիաֆրագման:

Մանրամասն տեղեկատվության համար տես [3.5 Փականի դիաֆրագմայի փոխարինում on page 10](#):

### 3.3.1 Ամրակցիչի պտտող մոմենտի տվյալների աղյուսակ փականի իրանից մինչև շարժաբեր մեխանիզմների համար

Տրված արժեքները նախատեսված են քայուղով մշակված ամրակցիչների համար:

Փականի չափս		Բոլտի չափս		Դիաֆրագմա պոլիտետրաֆլորէթիլենից		Դիաֆրագմա ճկուն պոլիմերից	
անվանակա ն տրամագիծ	դյույմային ձևաչափ	մետրային ձևաչափ	իմպերիալ ձևաչափ	Ն·մ	դյույմ- ֆունտ	Ն·մ	դյույմ- ֆունտ
բիո-տեկ (8, 10, 15)	բիո-տեկ (0.25, 0.375, 0.50)	M4	#6	2.3-5.7	23-25	2.3-5.7	23-25
15	0.50	M6	1/4"	2.8-9.1	25-34	2.3-4.5	20-40
20	0.75	M6	1/4"	5.7-9.1	50-80	2.3-5.7	20-50
25	1.00	M8	5/16"	7.4-13.6	65-120	5.1-7.9	45-70
40	1.50	M10	3/8"	23-25	200-225	8.5-14.7	75-130
50	2.00	M12	7/16"	25-34	225-300	11-20	100-180

## 3.4 Փականի կազմատուև

1. Հանեք խողովակում եղած ամբողջ ճնշումը:
2. Եթե շարժաբերի աշխատանքային ձևը խափանման ժամանակ բացվող կամ խափանման ժամանակ փակվող ձևն է, ապա շարժաբերը լցրեք օդով:

Եթե շարժաբերի աշխատանքային ձևն է ...	ապա ...
խափանման ժամանակ բացվող,	շարժաբերը լցրեք բավարար օդով՝ փականը մասնակիորեն փակելու համար:

Եթե շարժաբերի աշխատանքային ձևն է ...	ապա ...
խափանման ժամանակ փակվող,	շարժաբերը լցրեք բավարար օդով՝ փականը մասնակիորեն բացելու համար:

3. Հեռացրեք փակոցի ամրակումները:
4. Փականի իրանից բարձրացրեք վերնամասի սարքավորումները:
5. Եթե շարժաբերի աշխատանքային ձևը խափանման ժամանակ բացվող ձևն է, ապա շարժաբերից հանեք ճնշումը:

### 3.5 Փականի դիաֆրագմայի փոխարինում

1. Կազմատեք փականը:  
Մանրամասն տեղեկատվության համար տես [3.4 Փականի կազմատում on page 9](#):
2. Պտուտակելով հանեք դիաֆրագման ճնշակից՝ պտտելով դիաֆրագման ժամացույցի սլաքի հակառակ ուղղությամբ:  
Փոխարինվող դիաֆրագման պետք է ունենա գործարանային դիաֆրագմայի նույն չափսը և նույն կարգը:
3. Պտտեք դրաֆրագման մինչև վերջ կամ մինչև ուժեղ դիմադրության հանդիպելը այնպես, որ լրացուցիչ ուժով էականորեն չկարողանաք պտտել դիաֆրագման ճնշակի մեջ:



4. Պոլիտետրաֆլյորէթիլենային դիաֆրագման փոխարինելու ժամանակ կրկին շրջեք դիաֆրագման:



5. Եթե շարժաբերի աշխատանքային ձևը խափանման ժամանակ բացվող ձևն է, ապա ընտրեք այս քայլերից որևէ մեկը:

Եթե շարժաբերի աշխատանքային ձևն է ...	ապա ...
խափանման ժամանակ բացվող,	Խջեցրեք օդի ճնշումն այնքան, մինչև դիաֆրագմայի հետևի կողմը փակոցի նկատմամբ հարթ ձև ընդունի:
խափանման ժամանակ փակվող,	<ol style="list-style-type: none"> <li>1. Օդային գիծը միացրեք ստորին փակոցի գլանին:</li> <li>2. Խցիկը լցրեք բավարար օդով դիաֆրագման դեպի վեր տեղաշարժելու համար այնքան, մինչև դիաֆրագմայի հետևի կողմը փակոցի նկատմամբ հարթ ձև ընդունի: Մի սվեք ավելորդ օդի ճնշում, որպեսզի դիաֆրագման չըջվի:</li> </ol>

6. Մանրամասն տեղեկատվության համար տես [3.3 Փակոցի ամրակումների ձգում on page 8](#):
7. Եթե շարժաբերի աշխատանքային ձևը խափանման ժամանակ բացվող ձևն է, ապա հանեք օղը՝ թույլ տալով, որ փականը բացվի:

### 3.6 Վերհանման (փակման) սահմանափակիչի կարգավորում

Վերհանման սահմանափակիչը նախատեսված է դիաֆրագմայի գերբեռնվածությունը կանխելու և այդպիսով դիաֆրագմայի կայնքի տևողությունը երկարացնելու համար: Վերհանման սահմանափակիչները տեղադրվում են գործարանային պայմաններում և չունեն ամենօրյա կարգավորման կարիք: Սակայն վերհանման սահմանափակիչների կարգավորումը խորհուրդ է տրվում կատարել փականի դիաֆրագմայի փոխարինումից հետո:

Վերհանման սահմանափակիչը 3, 5, 8 և 16 սերիայի շարժաբերների համար տեղադրվում է ըստ նախընտրության:

1. Հանե՛ք օղի ճնշումը շարժաբերի կափարիչներից:
2. Թուլացրե՛ք սևեռակիչ մանեկները և հետ պտտե՛ք մեկ պտույտով:
3. Եթե շարժաբերը հետադարձ աշխատող կամ խափանման ժամանակ բացվող շարժաբեր է, ապա փականը փակելու համար գործադրե՛ք բավարար ճնշում վերին կապարիչում:
4. Աշխատանքային բոլոր ռեժիմների համար ստորին սևեռամանեկը պտտե՛ք ժամացույցի սլաքի ուղղությամբ՝ կանխելով կարգավորման միջադիրի պտտումն այնքան ժամանակ, մինչև փականից արտահոսք սկսվի:
5. Ստորին սևեռամանեկը պտտե՛ք ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ՝ շարունակելով կանխել կարգավորման միջադիրի պտտվելը այնքան ժամանակ, մինչև փականից արտահոսքը դադարի:
6. Միասին ձգե՛ք սևեռակիչ մանեկները:

### 3.7 Ճնշակի, խողովակի մանեկի և կիպարար օղակի փոփոխում

Դիաֆրագմայի էթիլեն-պրոպիլեն- դիեն-մոնոմերից և պոլիտետրաֆլյորէթիլենից տեսակները փոփոխելու համար անհրաժեշտ է փոխել խողովակի մանեկը: Դիաֆրագմայի տեսակները փոխելիս՝ հետևե՛ք ստորև ներկայացված քայլերին:

1. Պտուտակադարձիչը կամ նմանատիպ բարակ գործիքը մտցրե՛ք ճնշակի և փակոցի կցաշուրթի միջև:



**Նկար 7: Հանե՛ք ճնշակը:**

2. Թեթևակի ուժ գործադրե՛ք ճնշակի հետևի կողմից:
3. Հանե՛ք ճնշակը և կիպարար օղակը:



**Նկար 8: Ճնշակի հավաքում**

4. Տեղադրեք նոր կիպարար օղակ, խողովակի սևեռամանեկ և ճնշակ (միայն 0.5 և 0.75" չափսերի): Մի օգտագործեք նույն կիպարար օղակը երկրորդ անգամ:

### 3.8 Օ-աձև օղակների փոխարինում

1. Անջատեք օղային գծերը:
2. Հեռացրեք բոլոր ստուգիչ կոմպլեկտները:
3. Կազմատեք փականը:  
Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս սույն ուղեցույցի «Փականի կազմատում» բաժինը:
4. Կազմատեք շարժաբերը:  
Մանրամասն տեղեկատվության և փականի ճիշտ աշխատանքն ապահովելու համար տե՛ս սույն ձեռնարկի «Շարժաբերի դիաֆրագմայի և զսպանակի փոխարինում» բաժինը (խափանման ժամանակ բացվող, խափանման ժամանակ փակվող կամ հետադարձ աշխատող շարժաբերներ):
5. Փակոցից հանեք փականի դիաֆրագման, ճնշակը և տռնակի հավաքվածքը:
6. Փոխեք օ-աձև օղակները և քսայուղով պատեք նոր օ-աձև օղակները:  
Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս սույն ուղեցույցի «Քսայուղման պահանջներ» բաժինը:
7. Փակոցի վրա փոխեք փականի դիաֆրագման, ճնշակը և տռնակի հավաքվածքը: Bio-Tek-ի վրա պետք է աշխատել զգուշորեն, որպեսզի ճնշակի T-աձև մուտքը ստորին կափարիչում համընկնի մամլված ակնջակներին:
8. Կրկի հավաքեք շարժաբերին:  
Մանրամասն տեղեկատվության և փականի ճիշտ աշխատանքն ապահովելու համար տե՛ս սույն ձեռնարկի «Շարժաբերի դիաֆրագմայի և զսպանակի փոխարինում» բաժինը (խափանման ժամանակ բացվող, խափանման ժամանակ փակվող կամ հետադարձ աշխատող շարժաբերներ):
9. Կրկին հավաքեք փականը:
10. Կրկին միացրեք օղային գծերը:
11. Եթե շարժաբերի աշխատանքային ձևը խափանման ժամանակ բացվող կամ հետադարձ ձևն է, ապա հետևեք ստորև նշված քայլերին.
  - a) Ստուգեք, որ շարժաբերի վերին կափարիչը ցուցիչ տռնակի օ-աձև օղակի կիպարարից արտահոսք չունենա:
  - b) Եթե կա արտահոսք, փոխեք իլի օ-աձև օղակը:

## 3.9 Պահանջներ քայուղման համար

### Քայուղման գրաֆիկ

Կրկին քայուղելուց առաջ մաքրեք հին քայուղի մնացորդները: Ամեն անգամ փականի իրանից մինչև շարժաբեր տեղադրված մեխանիզմները քանդելիս քայուղով պատեք սռնակը, օ-աձև օղակները և հպվող մակերեսները:

### Ընդունելի քայուղեր

Բրենդ	Քայուղի տեսակ
Chevron	

## 3.10 Խափանման ժամանակ բացվող շարժաբերի դիաֆրագմայի և զսպանակի փոխարինում

3, 5 և 8 սերիաների շարժաբերների համար գոյություն ունի մի տեսակի ֆիքսատոր, իսկ 16 սերիայի շարժաբերների համար՝ մեկ այլ:



### ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Շարժաբերի սալիկը բեռնվածքի տակ է: 3, 5, 8 և 16 սերիաների խափանման դեպքում բացվող շարժաբերները պարունակում են ուժեղ զսպաններ և առանց ITT ընկերության կողմից հաստատված ամրակցման և ամրակցման մեթոդների՝ չպետք է կազմատվեն:

1. Եթե առկա է, հեռացրեք փոխարկիչների կոմպլեկտը:
2. Անջատեք օդային գծերը:
3. ITT ընկերությունը խորհուրդ է տալիս կատարել հետևյալ գործողություններն այն ժամանակ, երբ իրանը հեռացված է շարժաբերից.
  - a) Կազմատեք փականը:  
Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս սույն ուղեցույցի «Փականի կազմատում» բաժինը:
  - b) Պտուտակելով հանեք դիաֆրագման ճնշակից՝ պտտելով այն ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ:
4. Հեռացրեք շարժաբերի ամրակումները և բարձրացնելով հանեք վերին կափարիչը:
5. Շարժաբերի կազմատում ֆիքսատորով.
  - a) Տեղադրեք շարժաբերը ֆիքսատորում:
  - b) Թուլացրեք ցուցիչ սռնակը երկու պտույտի չափով:
  - c) Շարժաբերը տեղադրեք կենտրոնական դիրքով ֆիքսատորում՝ ճնշակը տեղադրելով ֆիքսատորի ստորին սալիկի ճիշտ բաժանարարի վերևում՝ կախված փականի չափսից:
  - d) Նեցուկի սալիկը և բաժանարարի սալիկը տեղադրեք շարժաբերի վերին սալիկի վրա:
  - e) Պտտեք ֆիքսատորի պտտանիվը ժամացույցի սլաքի ուղղությամբ՝ ցուցիչ սռնակի պրկվածությունը թուլացնելու համար:
  - f) Հեռացրեք սռնակը և պտտեք ֆիքսատորի պտտանիվը ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ այնքան, մինչև զսպանակի պրկվածությունը թուլանա:

Գործողությունները կատարեք զգուշորեն, քանի որ զսպանակի պարուրակը կարող է ճմլել շարժաբերի դիաֆրագման և թույլ չտա, որ զսպանակը երկարի:
6. Շարժաբերի դիաֆրագմայի և զսպանակի փոխարինում.
  - a) Չսպանակը տեղադրեք ստորին կափարիչում և տեղադրեք շարժաբերի սալիկը զոգավոր մասով դեպի ներքև՝ փականի սռնակի վերևում:
  - b) Շարժաբերը տեղադրեք ֆիքսատորում՝ բաժանարարի վերևում:
  - c) Նեցուկի սալիկը տեղադրեք շարժաբերի սալիկի վրա:
  - d) Բաժանարարի սալիկը տեղադրեք վերնամասում:

- e) Պտտեք ֆիքսատորի պտտանիվը ժամացույցի սլաքի ուղղությամբ և սեղմեք զսպանակն այնքան, մինչև շարժաբերի սալիկը ընդունի տնակին:  
Գործողությունները կատարեք զգուշորեն այնպես, որ տնակն անցնի շարժաբերի սալիկի կենտրոնական անցքի միջով:
  - f) Շարժաբերի դիաֆրագման զգուշորեն սահեցրեք փականի առանցքածողի վերևով այնպես, որ վերին գլխիկը հայտնվի ստորին կափարիչում:
  - g) Շարժաբերի դիաֆրագման տեղադրեք այնպես, որ բուլտերի միջանցիկ անցքերը համընկնեն ստորին կափարիչի պարուրակավոր միջադիրների հետ:
7. Շարժաբերի հավաքում ֆիքսատորով.
- a) Տեղադրեք շարժաբերի սալիկը գոգավոր մասով դեպի ներքև՝ փականի առանցքածողի վերևում:
  - b) Սռնակի սևեռամանեկի մակերեսը մշակեք Loctite 7649 N պրայմերով:
  - c) Զտեք Blue Loctite #242 և ցուցիչ տնակը ձեռքով պտուտակեք փականի առանցքածողին:
  - d) Պտտեք ֆիքսատորի պտտանիվը ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ՝ պրկվածությունը թուլացնելու և շարժաբերը ֆիքսատորից հանելու համար:
  - e) Անցքերով սալիկը բռնեք աքցանով և քաշեք այնպես, որ շարժաբերն ազատորեն շարժվի:
  - f) Չգուշորեն ձգեք ցուցիչ տնակը դարձակով, որպեսզի շարժաբերի դիաֆրագման ճիշտ կերպով մտնի իր տեղում:
  - g) Շարժաբերի վերին կափարիչը տեղադրեք այնպես, որ վերին և ստորին կափարիչների 1/8" NPT ներածիչները համընկնեն:
  - h) Ձգեք շարժաբերի կափարիչը ամրակումներին:  
Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս սույն ձեռնարկի «Շարժաբերի կափարիչի ձգումը ամրակումներին» բաժինը:

### 3.11 Խափանման ժամանակ փակվող շարժաբերի դիաֆրագմայի և զսպանակի փոխարինում

3, 5 և 8 սերիաների շարժաբերների համար գոյություն ունի մի տեսակի ֆիքսատոր, իսկ 16 սերիայի շարժաբերների համար՝ մեկ այլ:

1. Եթե առկա է, հեռացրեք փոխարկիչների կոմպլեկտը:
2. Անջատեք օդային գծերը:
3. ITT ընկերությունը խորհուրդ է տալիս կատարել հետևյալ գործողություններն այն ժամանակ, երբ իրանը հեռացված է շարժաբերից.
  - a) Կազմատեք փականը:  
Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս սույն ուղեցույցի «Փականի կազմատում» բաժինը:
  - b) Պտուտակելով հանեք դիաֆրագման ճնշակից՝ պտտելով այն ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ:
4. Ստորին կափարիչին օդ տվեք, որպեսզի հեշտացնեք կազմատումը իրանից, այնուհետև բաց թողեք օդը:
5. Հանեք փականի դիաֆրագման և ցուցիչ տնակի պլաստիկ խցանը (տեղադրվում է տնակների վրա)՝ պտտելով դրանք ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ:
6. Շարժաբերի կազմատում ֆիքսատորով.
  - a) Շարժաբերը տեղադրեք կենտրոնական դիրքով ֆիքսատորում՝ ճնշակը տեղադրելով ֆիքսատորի ստորին սալիկի ճիշտ բաժանարարի վերևում:
  - b) Առանցքածողի ուղղորդիչն անցկացնել ֆիքսատորի պտտանիվի կենտրոնով և տեղավորել այն շարժաբերի ցուցիչ տնակի #10-24 UNC պարուրակավոր անցքի մեջ (խցանի նախկին տեղում):
  - c) Պտտել ֆիքսատորի պտտանիվը ժամացույցի սլաքի ուղղությամբ այնքան, մինչև տնակը հագնի շարժաբերի վերին կափարիչին:



- d) Յեռացնել կափարիչների բոլոր թասակները, ամրակումները և տափօղակները:
- e) Պտտել ֆիքսատորի պտտանիվը ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ այնքան, մինչև զսպանակի պրկվածությունը թուլանա:
- f) Յեռացրեք շարժաբերի վերին կափարիչը, հանեք զսպանակ(ներ)ը և հետ պտտտակեք ցուցիչ տնակը:
- g) Յեռացրեք շարժաբերի վերին սալիկը և շարժաբերի դիաֆրագման:
- 7. Շարժաբերի դիաֆրագմայի և զսպանակի փոխարինում.
  - a) Տեղադրեք շարժաբերի նոր դիաֆրագման (վերին գլխիկը դեպի վեր):  
Յամոզվեք, որ դիաֆրագման ունի այնպիսի դիրք, որ դիաֆրագմայի երկու բոլտերի անցքերը համընկնեն շարժաբերի կափարիչի բոլտերի անցքերին՝ առանց դիաֆրագմայի ձգման:
  - b) Եթե կա զսպանակը փոխարինելու անհրաժեշտություն, ապա տեղադրեք նոր զսպանակ:
  - c) Եթե չկա զսպանակը փոխարինելու անհրաժեշտություն, ապա տեղադրեք հին զսպանակը:
- 8. Շարժաբերի հավաքում ֆիքսատորով.
  - a) Ֆիքսատորի ստորին սալիկի կոճգամի վրա տեղադրեք ճիշտ բաժանարար՝ կախված փականի չափսից:
  - b) Բաժանարարի վրա տեղադրեք շարժաբերի կիսահավաքվածքը զսպանակ(ներ)ի և վերին կափարիչի հետ միասին (ճնշակը նստում է բաժանարարի վրա):
  - c) Ֆիքսատորի պտտանիվի կենտրոնով, շարժաբերի վերին կափարիչով անցկացրեք առանցքաձողի ուղղորդիչը և տեղադրեք այն շարժաբերի ցուցիչի մեջ:
  - d) Շարժաբերի վերին կափարիչը տեղադրեք այնպես, որ վերին և ստորին կափարիչների 1/8" NPT ներածիչները համընկնեն, իսկ ձողի ուղղորդիչները սահեն միջանցիկ անցքերի միջով:
  - e) Պտտեք պտտանիվը ժամացույցի սլաքի ուղղությամբ, որպեսզի զսպանակ(ներ)ը սեղմվեն այնքան, որ կափարիչները գրեթե հավեն միմյանց:
  - f) Յեռացրեք ձողի չորս պարուրակավոր ուղղորդիչները:
  - g) Սկսեք ձգել շարժաբերի կափարիչի ամրակումները և շարունակեք սեղմել զսպանակ(ներ)ն այնքան, մինչև կափարիչները հավեն իրար:
  - h) Տեղադրեք վերին կափարիչի մնացած տափօղակները և ամրակումները:
  - i) Ձգեք շարժաբերի կափարիչը ամրակումներին:  
Մանրամասն տեղեկատվության համար տես սույն ձեռնարկի «Շարժաբերի կափարիչի ձգումը ամրակումներին» բաժինը:

### 3.12 Յետադարձ աշխատող շարժաբերի դիաֆրագմայի փոխարինում

1. Եթե առկա է, հեռացրեք փոխարկիչների կոմպլեկտը
2. Անջատեք օդային գծերը:
3. ITT ընկերությունը խորհուրդ է տալիս կատարել հետևյալ գործողություններն այն ժամանակ, երբ իրանը հեռացված է շարժաբերից.
  - a) Կազմատեք փականը:  
Մանրամասն տեղեկատվության համար տես սույն ուղեցույցի «Փականի կազմատում» բաժինը:
4. Յեռացրեք շարժաբերի ամրակումները և բարձրացնելով հանեք վերին կափարիչը:
5. Յեռացրեք շարժաբերի վերին սալիկը և շարժաբերի դիաֆրագման:
6. Յեռացրեք ցուցիչ տնակը
7. Տեղադրեք շարժաբերի նոր դիաֆրագման (վերին գլխիկը դեպի վեր):  
Յամոզվեք, որ շարժաբերի դիաֆրագման ունի այնպիսի դիրք, որ դիաֆրագմայի երկու բոլտերի անցքերը համընկնեն կափարիչի բոլտերի անցքերին՝ առանց դիաֆրագմայի ձգման:
8. Փոխեք շարժաբերի վերին սալիկը և շարժաբերի դիաֆրագման.
  - a) Սննակի սևեռամանեկի մակերեսը մշակեք Loctite 7649 N պրայմերով:
  - b) Ցուցիչ տնակի վրա քսեք Blue Loctite #242:

### 3.13 Ձգեք շարժաբերի կափարիչը կափարիչի ամրակումներին:

- c) Փոխեք ցուցիչ սռնակը:
- 9. Հավաքեք վերին հատվածն զգուշությամբ այնպես, որ պնևմոկցորդիչները համընկնեն ստորին կափարիչի պնևմոկցորդիչներին:
- 10. Ձգեք շարժաբերի կափարիչը ամրակումներին:  
Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս սույն ձեռնարկի «Շարժաբերի կափարիչի ձգումը ամրակումներին» բաժինը:

## 3.13 Ձգեք շարժաբերի կափարիչը կափարիչի ամրակումներին:

Ձգեք փակոցի ամրակումները խաչաձև ուղղություններով և ճիշտ պտտող մոմենտով:

1. Ձգեք փակոցի ամրակումները խաչաձև ուղղություններով «Շարժաբերի կափարիչից կափարիչին ամրակումների պտտող մոմենտի աղյուսակին» համապատասխան:
2. Կատարեք բազմաթիվ խաչաձև անցումներ, մինչև ստանաք վերջնական աղյուսակային արժեքներին համապատասխան պտտող մոմենտ:

### 3.13.1 Շարժաբերի կափարիչից կափարիչին ամրակումների պտտող մոմենտի աղյուսակ

Շարժաբերի սերիաներ	Բոլորի չափս		Պտտող մոմենտ	
	Իմպերիալ ձևաչափ	Պյուլմ-ֆունտ	Ն-մ	
Սերիա 3, 5, 8	#10	20	2.3	
Սերիա 16	1/4"	35	4.0	


Տրված արժեքները նախատեսված են բայուղով մշակված ամրակցիչների համար:

Պտտող մոմենտները չպետք է կիրառվեն միջավայրային ջերմաստիճանին մոտ ջերմաստիճաններում (38°C | 100°F-ից ցածր):

# 4 Մասերի ցանկ և լայնակի հատումների գծագրեր

## 4.1 Advantage 2.1 շարժաբեր մասեր

Մասերի ցանկ



Նկար 9: Խափանման ժամանակ փակվող շարժաբեր ճնշակի դետալներով

Անվանում	Նկարագրություն
1	Խողովակի սևեռամանեկ
2	Սեղմիչ օղակ
3	Ջենաբարձիկ
4	Դիաֆրագմա պոլիտետրաֆլյորէթիլենից
5	Ճնշակ

# 5 Certifications

## 5.1 Համապատասխանության հայտարարագիր



**ԵՅ-Համապատասխանության հայտարարագիր** (Միայն օրինակ է: Ստորագրված է, կիրառելի բնօրինակ հայտարարագիրը ներառված է փականի վկայագրման փաթեթում՝ այս շահագործման ձեռնարկից առանձին):

Սույնով մենք հայտարարում ենք, որ

ITT Bornemann GmbH ընկերությունը, որը գտնվում է  
Postfach 11 62, 31 676 Obernkirchen, Germany հասցեում,  
Fon +49 (0) 5 724 390-0, Fax +49 (0) 5 724 390-290,

որ հետևյալ սերիայի փականները՝

**Pure-Flo, EnviZion, BioviZion, Dia-Flo,**

համապատասխանում են ԵՅ-ի հետևյալ դիրեկտիվներին՝ պայմանով, որ շահագործման համար անհրաժեշտ տեղանքի պայմանները բավարարված լինեն, ինչպես նշված է ինժեներական փաստաթղթերում, մասնավորապես՝ շահագործման ձեռնարկում՝

**Սարքավորումներ - դիրեկտիվ (2006/42/EC)**

Եթե կիրառելի է (տե՛ս ապրանքի հետ առաքված վկայագրման փաթեթը), անհատական պատվերի հետ կհանձնվի համապատասխանության հետևյալ առանձին հայտարարագիրը՝

**EMC - դիրեկտիվ (2014/30/EU)**

**ATEX - դիրեկտիվ (2014/34/EU)**

**PED - դիրեկտիվ (2014/68/EU)**

Օգտագործված ներդաշնակեցված ստանդարտներ՝

- EN 19
- EN 12516-3

Տեխնիկական ֆայլը կազմելու համար լիազորված անձը՝ Մայք Սպաննուր – Որակի հարցերով մենեջեր

Obernkirchen, ամսաթիվ՝

Գլխավոր տնօրեն

Տեխնիկական տնօրեն

05/2022, վեր. 01

<http://www.bornemann.com>





**UKCA-Համապատասխանության հայտարարագիր** (Միայն օրինակ է: Ստորագրված է, կիրառելի բնօրինակ հայտարարագիրը ներառված է փականի վկայագրման փաթեթում՝ այս շահագործման ձեռնարկից առանձին):

Սույնով մենք հայտարարում ենք, որ

ITT Bornemann GmbH ընկերությունը, որը գտնվում է  
Postfach 11 62, 31 676 Obernkirchen, Germany հասցեում,  
Fon +49 (0) 5 724 390-0, Fax +49 (0) 5 724 390-290,

որ հետևյալ սերիայի փականները՝

**Pure-Flo, EnviZion, BioviZion, Dia-Flo,**

համապատասխանում են ՄԹ-ի հետևյալ կանոնակարգերին՝ պայմանով, որ շահագործման համար անհրաժեշտ տեղանքի պայմանները բավարարված լինեն, ինչպես նշված է ինժեներական փաստաթղթերում, մասնավորապես՝ շահագործման ձեռնարկում՝

**Սարքավորումների մատակարարման (անվտանգության) 2 008 թվականի թիվ 1 597 կանոնակարգ**

Եթե կիրառելի է (տե՛ս ապրանքի հետ առաքված վկայագրման փաթեթը), անհատական պատվերի հետ կհանձնվի համապատասխանության հետևյալ առանձին հայտարարագիրը՝

Էլեկտրամագնիսական համատեղելիության 2 016 թվականի թիվ 1 091 կանոնակարգ

Սարքավորումներ և պաշտպանիչ համակարգեր, որոնք նախատեսված են պոտենցիալ պայթյունավտանգ մթնոլորտում կիրառելու համար՝ ըստ 2 016 թվականի թիվ 1 107 կանոնակարգերի

Ճնշման սարքավորումների (անվտանգության) 2 016 թվականի թիվ 1 005 կանոնակարգեր

Կիրառվող ստանդարտներ՝

- EN 19
- EN 12516-3

Տեխնիկական ֆայլը կազմելու համար լիազորված անձը՝

Ստեֆանո Պիրոն (Stefano Piron)

ITT Industries Limited

Norton House

Stewart Road

Basingstoke

Hampshire RG24 8NF

United Kingdom

Obernkirchen, ամսաթիվ՝

Գլխավոր տնօրեն

Տեխնիկական տնօրեն

05/2022, վեր. 01

<http://www.bornemann.com>



## 5.2 Միավորման հայտարարագիր



**ԵՅ-Միավորման հայտարարագիր-** (Միայն օրինակ է: Ստորագրված է, բնօրինակ հայտարարագիրը ներառված է փականի վկայագրման փաթեթում՝ այս շահագործման ձեռնարկից առանձին)

համաձայն սարքավորումների 2006/42 դիրեկտիվի ԵՅ Չավելված II Բ-ի

c

ITT Bornemann GmbH

Postfach 11 62, 31 676 Obernkirchen, Germany

Fon +49 (0) 5 724 390-0, Fax +49 (0) 5 724 390-290,

որ ոչ ամբողջական սարքավորումները, միայն հաղորդակները, տեսակ՝

**Advantage 2,1, Advantage S33, ACS, Dia-Flo, ZA, ZB**

Չամապատասխանում են սարքավորումների (2006/42/EC) դիրեկտիվի Չավելված I, 1,1.2, 1,1.3, 1,1.5, 1,1.6, 1,2.1, 1,2.2, 1,2.3, 1,3.1, 1,3.2, 1,3.4, 1,3.7 և 1,3.9 հոդվածների հետևյալ հիմնական պահանջներին

Օգտագործված ներդաշնակեցված ստանդարտներ՝

- EN 19
- EN 12516-3

Գործարկումն արգելվում է, քանի դեռ չի հաստատվել, որ սարքավորումները, որոնցում պետք է տեղադրվեն վերը նշված սարքավորումները, համապատասխանում են սարքավորումների (2006/42/EC) դիրեկտիվին.

Նաև հայտարարում ենք, որ այս ոչ ամբողջական սարքավորման համապատասխան տեխնիկական փաստաթղթերը պատրաստվել են համաձայն VII Չավելվածի, Մաս Բ-ի և պարտավորվում ենք դրանց պատճենը տրամադրել շուկայի վերահսկողության մարմիններին՝ ըստ պահանջի:

Սույն փաստաթղթերի կազմման համար լիազորված է՝ Մայք Սպաննուօթը (Ռրակի կառավարման ղեկավար)

Obernkirchen, ամսաթիվ՝

Գլխավոր տնօրեն

Տեխնիկական տնօրեն

05/2022, վեր. 01

<http://www.bornemann.com>



**UKCA-Միավորման հայտարարագիր-** (Միայն օրինակ է: Ստորագրված է, բնօրինակ հայտարարագիրը ներառված է փականի վկայագրման փաթեթում՝ այս շահագործման ձեռնարկից առանձին)

համաձայն սարքավորումների մատակարարման (անվտանգություն) 2 008 թվականի թիվ 1 597 կանոնակարգի II Բ հավելվածի

մենք սույնով հայտարարում ենք, որ

ITT Bornemann GmbH ընկերությունը, որը գտնվում է  
Postfach 11 62, 31 676 Obernkirchen, Germany հասցեում  
Fon +49 (0) 5 724 390-0, Fax +49 (0) 5 724 390-290,

որ ոչ ամբողջական սարքավորումները, միայն շարժաբեքները, տեսակ՝

**Advantage 2,1, Advantage S33, ACS, Dia-Flo, ZA, ZB**

Համապատասխանում են սարքավորումների մատակարարման (անվտանգություն) 2 008 թվականի թիվ 1 597 կանոնակարգի հետևյալ հիմնական պահանջներին՝ Հավելված I, 1,1.2, 1,1.3, 1,1.5, 1,1.6, 1,2.1, 1,2.2, 1,2.3, 1,3.1, 1,3.2, 1,3.4, 1,3.7 և 1,3.9 հոդվածներ

Կիրառվող ստանդարտներ՝

- EN 19
- EN 12516-3

Գործարկումն արգելվում է, քանի դեռ չի հաստատվել, որ հարմարանքները, որոնցում պետք է տեղադրվեն վերը նշված սարքավորումները, համապատասխանում են սարքավորումների ՄԹ 2008 թվականի թիվ 1597 կանոնակարգին:

Նաև հայտարարում ենք, որ այս ոչ ամբողջական սարքավորման համապատասխան տեխնիկական փաստաթղթերը պատրաստվել են համաձայն VII Հավելվածի, Մաս Բ-ի և պարտավորվում ենք դրանց պատճենը տրամադրել շուկայի վերահսկողության մարմիններին՝ ըստ պահանջի:

Սույն փաստաթղթերի կազմման համար լիազորված է՝

Ստեֆանո Պիրոն (Stefano Piron)

ITT Industries Limited

Norton House

Stewart Road

Basingstoke

Hampshire RG24 8NF

United Kingdom

Obernkirchen, ամսաթիվ՝

Գլխավոր տնօրեն

Տեխնիկական տնօրեն

05/2022, վեր. 01

<http://www.bornemann.com>



Այս փաստաթղթի ամենավերջին  
տարբերակը տեսնելու և մանրամասն  
տեղեկատվության համար այցելե՛ք մեր  
կայքէջը.  
[www.engvalves.com](http://www.engvalves.com)



ITT Engineered Valves  
33 Centerville Road  
Lancaster, PA 17603  
USA

**Ձև M-Adv2.1.hy-am.2022-06**

©2022 ITT Inc. ընկերություն կամ նրա լիարժեք սեփականությունը հանդիսացող մասնաճյուղեր  
Բնօրինակ ցուցումները ներկայացված են անգլերեն լեզվով: Բոլոր ոչ անգլերեն տարբերակները համարվում են թարգմանություն  
բնօրինակից: